

Իրմէ ինծի ծանօթ յաջորդ ձեռագիրն է Էջմիածնայ թիւ 181-353 (Կարինեան ցուցակի թիւ 175) Աստուածաշունչը (*) թուղթի վրայ գրեալ, բոլորգիր, բազմաթիւ գրիչներէ եւ այժմ կաշեկազմ: Գրեալ Կիւրակոս Վարդապետի համար որ ձեռագրին մէկ մասին գրիչն ալ եղած է: Թորոս Տարօնեցի նկարող եւ ծաղկող եղած է այս ձեռագրին մասնակցելով նաեւ գրչու թեան: Հոս կուտամ Թորոսի վերաբերող բոլոր յիշատակարանները:

Էջ 57բ կարմրադեղով «եւ զԹորոս Նկարագրաւ»:

Էջ 205ա .

Ամենունակ արդ բարի,
Պարունակաւդ բոլորի,
եւ խնամածու մարդկան սեռի,
բարունոյ Կիրակոսի .
եւ Յովաննէս քարտուղի
եւ Թորոսի կրանաւորի .
յահեղ աւուր դատաստանի,
յորժամ բազմիս ի մեծ բեմի .
արդարադատ քո աւրինի,
ոչ արասցես ի մեր դիմի,
այլ շնորհաւք քո հրամանի
մեր յանցանաց ա(մենայն)ի
լեր դու քաւիչ յայս աշխարհի
եւ յահաւոր դատաստանի
ամէն ամէն եւ եղիցի:

Էջ 368ա .

Տ(է)ր խնամօղ ա(մենայն)ի,
որ պաշտպան ես մարդկան ազգի .
լեր ծառայից քոց հովանի՝
գրիչ Թորոսի եւ Յովաննիսի .
զերծո՛ւ յաւուրն դատաստանի
ի դազանէն դառնամաղձի .

(*) Այս եւ ասոր նման ուրիշ յիշատակարաններու արտագրութիւնը կը պարտիմ մեծսիրտ եւ ազնիւ բարեկամիս Գարեգին Սրբազանի, որ այնքան ազնուութեամբ իր դեռ չի հրատարակուած «Պաղբակեանք կամ Պոռեանք» բազմաշխատ գործին Բ. հատորէն թոյլատրեց որ հրատարակեմ: Տես յաւելուած Բ. 80: Հոս իմ խորին շնորհակալութիւններս յայտնել պարտք կը սեպեմ մեծանուն գիտնականին: